ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 7-ից 11-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նոքսվիլ) գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հովհաննես Աբրահամյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետի պարտականությունները կատարող, էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ք. Նոքսվիլ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2024թ. հոկտեմբերի 7-ից 11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԱՄՆ առևտրի և զարգացման գործակալություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցություն Եվրոպայում և Եվրասիայում քաղաքացիական միջուկային էներգետիկայի տեղակայմանը նվիրված աշխատաժողովին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Հիշյալ աշխատաժողովի շրջանակներում քննարկվել են օրակարգով նախատեսված հարցերը, մասնավորապես՝ միջուկային ռեակտորների տեղակայման մարտահրավերների, ֆինանսավորման մեխանիզմների, լիցենզավորման և կարգավորման գործընթացի վերաբերյալ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Գործուղման շրջանակներում 1:1 ձևաչափով հանդիպում է կայացել Օքրիջի ազգային լաբորատորիայի ներկայացուցչի հետ, որի շրջանակներում քննարկվել են հնարավոր համագործակցության հետ կապված հարցեր: Առանձնազրույց է տեղի ունեցել նաև ԱՄՆ Պետդեպարտամենտի ներկայացուցչի հետ:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել միջուկային էներգետիկայի բնագավառում սերտ համագործակցությունը ԱՄՆ գերատեսչությունների հետ տարբեր ձևաչափերով:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

15.10.2024թ.